ԱՇԽԱՐՀԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ՝ DHL-Ի ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-43

Հիմնաբառեր. *գլոբալացում, գլոբալ փոխկապվածության համաթիվ, միջազգային հոսքեր, առևտուր, կապիտալ, տեղեկատվություն, մարդիկ, լոգիստիկա*

Ապրանքների, կապիտալի, մարդկանց և տեղեկատվության շարունակական փոխանակությունն ու տեղաշարժը երկրների միջև վաղուց ի վեր վերածվել են կյանքի բնականոն ընթացքի: Միջազգային հոսքերը պարզեցնելու, արագացնելու և անխափան դարձնելու կամ, այլ կերպ ասած, լոգիստիկ գործընթացներն առավել արդունավետ դարձնելու համար երկրները մշտապես գործադրում են լրջագույն ջանքեր. չէ՞ որ դրանից են կախված գլոբալ գործընթացներից երկրների օգուտ քաղելու հնարավորությունները: Այդօրինակ հնարավորությունների գնահատմանն է միտված միջազգային խոշոր լոգիստիկ ընկերության՝ DHL-ի մշակած գլոբալ փոխկապվածության համաթիվը, որի հիման վրա արդեն ավելի քան քսան տարի (2001 թ.-ից սկսած) կազմվում է աշխարհի երկրների դասակարգման վարկանշային աղյուսակը: Համաթիվը յուրօրինակ գործիք է ոչ միայն գլոբալացման գործընթացներում երկրների ներգրավվածության, այլև դրանց լոգիստիկ հնարավորությունների գնահատման համար:

Տասնամյակներ շարունակ աշխարհի աճող տնտեսական, սոցիալ-մշակութային և քաղաքական փոխկախվածությունը բնորոշելու համար օգտագործվում է «գլոբալացում» եզրույթը[1]՝ այն հաճախ նույնացնելով Երկիր մոլորակի վրա համաշխարհային կապիտալի հզորության ընդլայնման և համեմատաբար «թույլ» երկրների շահագործման խստացման հետ: Սակայն, հակառակ արմատավորված ընկալումների, ուսում-

[1] Иноземцев, В. Л. (2008). Современная глобализация и ее восприятие в мире. Век глобализации, (1), с. 31-44.

Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ:

Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 50-ից ավելի գիտական և շուրջ երկու տասնյակ գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

https://orcid.org/0000-0002-5854-2473

Google Scholar profile: https://scholar.google.com/citations?user=sjZSaYsAAAAJ&hl=ru
Research Gate profile: https://www.researchgate.net/profile/Anna-Pakhlyan

նասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհն ավելի քիչ է գլոբալացված, քան շատերը ենթադրում են: Գործունեության մեծ մասը, որը կարող է տեղի ունենալ կամ ազգային սահմանների ներսում, կամ դրանից դուրս, դեռ ներքին է, ոչ թե միջազգային:

Մասնավորապես՝ համաշխարհային տնտեսական արտադրանքի մոտավորապես 20%-ն է արտահանվում (ավելացված արժեքի առումով), ՕՈՒՆ-ի հոսքերը համախառն հիմնական կապիտալի ձևավորման ընդամենը 6%-ն են, հեռախոսազանգերի րոպեների մոտ 7%-ն է (ներառյալ՝ ինտերնետով զանգերը) միջազգային բնույթի, և մարդկանց միայն 4%-ն է ապրում իր ծննդավայրը հանդիսացող երկրից դուրս[2]: Հետևաբար՝ կարելի է ասել, որ գլոբալացման ծավալների և խորության վերաբերյալ մարդկանց մեծամասնության պատկերացումները հաստատապես ուռճացված են:

Աշխարհի գլոբալացման և երկրների փոխկապակցվածության մակարդակի չափման կառուցակարգ է առաջարկում DHL-ը, որն ամերիկյան կապիտալով Գերմանիայում հիմնադրված խոշոր լոգիստիկ ընկերություն է և ապահովում է սուրհանդակային, փաթեթների ու էքսպրես փոստի առաքման ծառայություններ՝ տարեկան մատակարարելով ավելի քան 1,8 միլիարդ ծանրոց:

DHL-ի գլոբալ փոխկապվածության համաթիվը (Global Connectedness Index, GCI) չափում է առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային հոսքերի խորությունն ու լայնությունը: Ընդ որում, միջազգային հոսքերի խորությունը ցույց է տալիս, թե երկիրը որքանով է փոխազդում մնացյալ աշխարհի հետ կամ թե որքանով է ներգրավված առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային փոխանակության մեջ: Ավելի պարզ ասած, խոսքը վերաբերում է վերոնշյալ գործոնների միջազգային և ներպետական հոսքերի համամասնությանը. ներպետականի համեմատ որքան շատ են առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջպետական տեղաշարժերը, այնքան ավելի նշանակալի է այդ հոսքերի խորությունը և այլն: Մինչդեռ միջազգային հոսքերի լայնությամբ գնահատվում է, թե որքան լայնորեն են բաշխված այդ հոսքերն ամբողջ աշխարհում, այսինքն՝ նկատի է առնվում այս կամ այն երկրից առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերի աշխարհագրական դիվերսիֆիկացումը (բաշխվածությունը): Այս իմաստով, միջազգային հոսքերի լայնությունն առավել նշանակալի կլինի հատկապես այն երկրներում, որոնց առևտրային և այլ կապերը չեն սահմանափակվում միայն մերձավոր հարևան երկրներով:

DHL-ի գլոբալ փոխկապվածության GCI համաթիվը հաշվարկվում է 2001 թվականից սկսած: Համաթվի 2022 թվականի դասակարգման ցանկում ընդգրկվել են աշխարհի 171 երկիր և տարածքներ, որոնք միասին ապահովում են համաշխարհային ՀՆԱ 99,7%-ը և կենտրոնացնում աշխարհի բնակչության 96%-ը[3]:

GCI համաթիվը հաշվարկվում է 4 հիմնական ցուցանիշների և դրանց 13 ենթացուցչի միջազգային հոսքերի հիման վրա (գծապատկեր 1):

Այսպես՝ առևտրի հոսքերը ներառում են ապրանքների և ծառայությունների առևտուրը երկրների միջև: Ըստ կապիտալի հոսքերի՝ հաշվարկվում են օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) և պորտֆելային ներդրումների[4] պաշարներն ու հոսքերը: DHL-ի գլոբալ կապակցվածության ինդեքսի կապիտալ հենասյան շրջանակում եթե ըստ հոսքերի չափվում

[2] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Complete Report, https://www.dhl.com/content/dam/dhl/global/delivered/documents/pdf/dhl-global-connectedness-index-2022-complete-report.pdf, p. 17.

[3] DHL, Global Connectedness Index shows strength of globalization and benefits of improving it, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html

[4] ՕՈՒՆ-ի և պորտֆելային ներդրումների միջև տարբերությունն այն է, որ ՕՈՒՆ-ը ներդրողին վերապահում է ձայնի իրավունք օտարերկրյա ձեռնարկության կառավարման մեջ, մինչդեռ պորտֆելային ներդրումները՝ ոչ: Հաշվապահորեն՝ եթե ներդրողը տիրապետում է օտարերկրյա ընկերության առնվազն 10%-ին, այն դասակարգվում է որպես ՕՈՒՆ, իսկ 10%-ից ցածրի դեպքում համարվում է պորտֆելային ներդրում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

DHL-ի գլոբալ փոխկապվածության համաթվի ենթացուցիչները[5]

է ներդրումային գործունեությունն ընթացիկ տարվա ընթացքում, ապա, ըստ պաշարների, ընթացիկ տարվա ընթացքում կատարվող ներդրումները չափվում են ժամանակի ընթացքում գոյացած հոսքերի ամբողջության մեջ՝ միաժամանակ արտացոլելով նախորդող ներդրումների արժեքային փոփոխությունները: Ընդ որում, համաթվի հաշվարկները կատարվում են համաձայն կապիտալի դասակարգման ՏՀԶԿ մոտեցման[6], երբ հիմք է ընդունվում սեփական կապիտալը՝ բացառելով փոխառու կապիտալի դրսևորումները՝ այն պարզ համոզմամբ, որ միջազգային կապիտալում ներդրումները հիմնականում դիտարկվում են որպես երկրների համար շահավետ, մինչդեռ միջազգային պարտքի բարձր մակարդակը՝ իբրև անբարենպաստ գործոն: Տեղեկատվության հոսքերի ներքո նկատի են առնվում այնպիսի ենթացուցիչներ, ինչպիսիք են միջազգային ինտերնետ թողունակությունը, հեռախոսազանգերի րոպեների տևողությունը, երկրների միջև գիտահետազոտական համագործակցությունը և տպագիր հրատարակությունների առևտուրը: Այնինչ, մարդկանց հոսքերը ենթադրում են զբոսաշրջիկների մեկնումների ու ժամանումների, արտերկրյա համալսարաններում սովորող ուսանողների ու միգրանտների տեղաշարժերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

2020 թ.-ի «համեստ» անկումից հետո DHL-ի գլոբալ փոխկապվածության համաթիվը 2021 թ.-ին գերազանցել է նախահամավարակային մակարդակը և շարունա-

[5] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Complete Report / https://www.dhl.com/content/dam/dhl/global/delivered/documents/pdf/dhl-global-connectedness-index-2022-complete-report.pdf, p. 17.

[6] OECD (2009), OECD Benchmark Definition of Foreign Direct Investment 2008: Fourth Edition, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/9789264045743-en



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

DHL-ի գլոբալ փոխկապվածության (GCI) համաթիվը 2001-2022 թթ.՝ ըստ 4 հիմնական ցուցանիշների[7]

կել աճել 2022 թվականին: Բնականաբար, համաթիվը ձևավորող որոշ ցուցանիշների շարժընթացն էապես տարբերվում է (գծապատկեր 2):

Առևտուր

Համաշխարհային առևտրի ծավալները թեև կտրուկ անկում ապրեցին COVID-19 համավարակի պատճառով, սակայն 2021 և 2022 թթ. արագորեն վերականգնվելուց զատ, արձանագրեցին շարունակական աճի միտումներ: Ակնկալվում է, որ 2023 թվականին առևտուրն ավելի դանդաղ տեմպերով կաճի՝ պայմանավորված տնտեսական աճի համաշխարհային տեմպերի դանդաղմամբ:

Կապիտալ

DHL-ի GCI համաթվի շարժընթացը ցույց է տալիս, որ կապիտալի համաշխարհային հոսքերի անկումը համավարակից շատ ավելի վաղ է սկսվել՝ դեռևս 2018 թվականին, շարունակվել 2019 թվականին և, ի հակադրություն օրինաչափ տրամաբանության, սկսել է աճի միտում արձանագրել հենց 2020 թվականին, 2021 թվականին վերականգնել նախահամավարակային մակարդակը, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակից սկսած՝ ռուս-ուկրաինական պատերազմի և համաշխարհային աճի դանդաղման ազդեցությամբ, դարձյալ ՕՈՒՆ հոսքերի անկում է արձանագրվել: Անկախ ներդրումների ազատականացման և խրախուսման բացահայտ ազդեցությունից, աշխարհում ավելի մեծ թվով երկրներ են սկսել կիրառել ՕՈՒՆ հոսքերը սահմանափակող կամ կարգավորող քաղաքականություն:

Եթե GCI համաթվի կապիտալի հոսքերը համեմատում ենք ՕՈՒՆ-ի համաշխարհային միտումների հետ, որոշակի հակասություններ են ի հայտ գալիս: Մասնավորապես, ըստ Համաշխարհային ներդրումների զեկույցի, ՕՈՒՆ-ի համաշխարհային շարժի շարունակական անկում է արձանագրվել երեք տարի անընդմեջ՝ 2016 թ. համաշխարհային ՕՈՒՆ-ի հոսքերը կրճատվել են ընդամենը 2%-ով (-28 մլրդ ԱՄՆ դոլար)[8], 2017 թ.՝ 23%-ով (-0.44 տրլն ԱՄՆ դոլար)[9], իսկ 2018 թ.՝ ևս 13% նվազում է դիտվել (-0.2 տրլն ԱՄՆ դոլար)[10]: 2019 թ. քիչ թե շատ կայունացման ժամանակահատվածին հաջորդելու եկավ «վարակահարույց» 2020 թվականը՝ իր հետ

[7] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Key Highlights, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html, p. 6.
[8] UNCTAD, World Investment Report 2017: Investment and the Digital Economy, United Nations, New York and Geneva, pp. 2-4, https://unctad.org/system/files/official-document/wir2017_en.pdf
[9] UNCTAD, World Investment Report 2018: Investment and Industrial Policies, United Nations, New York and Geneva, p. 2, https://unctad.org/system/files/official-document/wir2018_en.pdf

բերելով համաշխարհային ՕՈՒՆ-ի հավելյալ 35% կրճատում. 2019 թ. 1.5 տրլն ԱՄՆ դոլարից ՕՈՒՆ-ի համաշխարհային ծավալը 2020 թ. հասավ 1 տրլն ԱՄՆ դոլարի[11]:

Տեղեկատվություն

Տվյալների միջազգային հոսքերը կըտրուկ աճել են 2020 թվականին, սակայն դա չի հանգեցրել կայունության: 2021 և 2022 թվականներին միջազգային ինտերնետային տրաֆիկի աճի տեմպերը կրկին համահունչ են եղել մինչհամավարակային միտումներին: Ձայնային զանգերի և գիտական համագործակցության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ տեղեկատվական հոսքերի գլոբալացումը շարունակվում է, սակայն վերջին տարիներին որոշակի դանդաղում է նկատվում:

Տվյալների հոսքի սահմանափակումների տարածումը, այնուամենայնիվ, կարող է զգալիորեն արգելակել համաշխարհային տեղեկատվական հոսքերի ընդլայնման հեռանկարները:

Մարդիկ

Մարդկանց հոսքերը մինչև 2022 թվականը չվերականգնեցին նախահամավարակային ծավալները: Միջազգային ճանապարհորդությունները 2020 թ.-ին և 2021 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, նվազել են մոտավորապես 70%-ով: 2022 թվականին թեև արտասահմանյան երկրներ մեկնողների թիվը մոտավորապես կրկնապատկվել է, սակայն դեռևս 37%-ով զիջում է 2019 թվականի մակարդակը:

ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը կանխատեսում է, որ 2023 թվականին արտասահմանյան երկրներ մեկնողների թիվը 5-20%-ով ցածր կլինի մինչհամավարակային մակարդակից[12]:

DHL GCI համաթվի հիման վրա երկրների դասակարգման 2022 թվականի վարկանշային սանդղակը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Ըստ DHL-ի գլոբալ փոխկապվածության համաթվի՝ աշխարհի 171 երկրի 2022 թ. վարկանշային սանդղակը գլխա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Երկրների դասակարգումն՝ ըստ Գլոբալ փոխկապվածության համաթվի[13]

Դիրք	2019-21 +/-	Երկիր	Միավոր (Խ/L)[14]	Դիրք	+/-	Երկիր	Միավոր (Խ/L)	Դիրք	2019-21 +/-	Երկիր	Միավոր (Խ/L)
1	0	Նիդերլանդներ	85 (39/46)	58	+18	Մակաույի ՀՎՇ	54 (37/16)	115	0	Նամիբիա	38 (28/10)
2	0	Սինգապուր	84 (45/39)	59	0	Ուկրաինա	53 (28/25)	116	+4	Մոզամբիկ	38 (25/13)
3	+1	Բելգիա	81 (44/38)	60	+5	Խորվաթիա	53 (32/21)	117	-7	Տոնգա	38 (31/7)
4	+1	Շվեյցարիա	79 (35/43)	61	-3	Վիետնամ	53 (27/26)	118	-4	Մավրիտանիա	37 (26/11)
5	-2	Իռլանդիա	77 (38/39)	62	-8	Պանամա	53 (27/26)	119	-3	Բելառուս	37 (27/11)
6	0	ԱՄԷ	77 (44/34)	63	-1	Սեյշելներ	53 (39/14)	120	+16	Սիերա Լեոնե	37 (23/14)
7	0	Միացյալ Թագ.	76 (29/47)	64	-3	Ղազախստան	52 (26/26)	121	+6	Կոտ դ'Իվուար	37 (17/20)
8	+2	Շվեդիա	75 (35/40)	65	-5	Չինաստան	52 (16/36)	122	-9	Սողոմոնյան կղզ.	37 (27/10)
9	-1	Գերմանիա	75 (34/42)	66	+7	Կոստա Ռիկա	52 (30/22)	123	+10	Բութան	36 (32/5)
10	+1	Դանիա	75 (35/40)	67	+2	Հնդկաստան	52 (13/39)	124	+7	Պարագվայ	36 (22/14)
11	-2	Լյուքսեմբուրգ	74 (40/34)	68	-5	Վրաստան	52 (32/19)	125	+20	Լիբերիա	36 (25/11)
12	+1	Մալթա	72 (40/32)	69	+8	Օման	51 (35/17)	126	-2	Ալժիր	36 (17/19)
13	+1	Հունգարիա	72 (39/33)	70	-3	Մոնղոլիա	51 (32/19)	127	+2	Լաոսի ԺԴՀ	36 (26/10)
14	+1	Մալայզիա	71 (34/37)	71	-3	Պերու	50 (20/31)	128	-6	Սամոա	35 (28/7)
15	+1	Չեխիա	71 (39/32)	72	+3	Կոլումբիա	50 (20/30)	129	+5	Մադագասկար	35 (18/18)
16	+1	Կորեայի Հանր.	70 (29/42)	73	-1	Մեքսիկա	50 (26/24)	130	-11	Իրաք	35 (18/18)
17	+2	Թայվան (Չին.)	70 (35/36)	74	-8	Հս. Մակեդոնիա	50 (32/18)	131	-5	Պակիստան	35 (9/26)

[10] UNCTAD, World Investment Report 2019: Special Economic Zones, United Nations, New York and Geneva, p. 2, https://unctad.org/system/files/official-document/wir2019_en.pdf

[11] UNCTAD, World Investment Report 2021: Investing in Sustainable Recovery, United Nations, New York and Geneva, p. 2, https://unctad.org/system/files/official-document/wir2021_en.pdf

[12] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Complete Report, https://www.dhl.com/content/dam/dhl/global/delivered/documents/pdf/dhl-global-connectedness-index-2022-complete-report.pdf, p. 57.

[13] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Key Highlights, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html, p. 11.

[14] Փակագծերում (Խ/L) ներկայացված են երկրների միջև առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերի խորությունն ու լայնությունը, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html (դիտման ամսաթիվ՝ 7.10.2023):

18	+5	Իսրայել	70 (28/42)	75	-1	Բարբադոս	48 (29/19)	132	-4	Ղազախստան	35 (26/9)
19	-7	Նորվեգիա	70 (29/40)	76	+13	Ալբանիա	48 (33/15)	133	-10	Նիգերիա	35 (11/24)
20	0	Ավստրիա	70 (39/31)	77	-6	Կամբոջա	47 (31/17)	134	-9	Բոլիվիա	35 (17/17)
21	-3	Ֆրանսիա	70 (28/41)	78	+3	Մոլդովա	47 (31/16)	135	0	Կաբո Վերդե	34 (27/8)
22	-1	Ֆինլանդիա	70 (33/36)	79	+1	Հայաստան	47 (29/18)	136	+3	Գամբիա	34 (24/10)
23	+3	Սլովենիա	68 (39/29)	80	-2	Ուրուգվայ	47 (24/23)	137	+5	Սենեգալ	34 (21/14)
24	+4	Թաիլանդ	68 (30/38)	81	+10	Տրինիդադ և Տոբագո	46 (26/21)	138	+10	Գվինեա	34 (20/14)
25	+8	Լեհաստան	68 (31/37)	82	+2	Արգենտինա	46 (19/27)	139	-2	Զամբիա	34 (23/11)
26	-4	Իսպանիա	68 (30/37)	83	-4	Բելիզ	46 (34/12)	140	-10	Մյանմա	34 (18/16)
27	+4	Էստոնիա	67 (41/26)	84	+15	Լիբիա	46 (28/18)	141	+20	Թիմոր Լեստե	34 (28/5)
28	+1	ԱՄՆ	67 (21/46)	85	-15	Ադրբեջան	46 (28/18)	142	-1	Բոթսվանա	34 (25/8)
29	-2	Իտալիա	66 (29/38)	86	-4	Մարոկկո	46 (23/23)	143	-5	Կամերուն	34 (16/18)
30	+2	Պորտուգալիա	66 (35/31)	87	-2	Անտիգուա և Բարբուդա	46 (35/11)	144	-26	Վանատաու	33 (26/8)
31	-7	Հոնկոնգ	66 (42/24)	88	+17	Մարշալյան կղզ.	45 (37/9)	145	+10	Տաջիկստան	33 (25/8)
32	-2	Կանադա	66 (30/35)	89	-3	Թունիս	45 (26/19)	146	+6	Իրան	33 (10/23)
33	-8	Ավստրալիա	66 (26/39)	90	-3	Հորդանան	45 (25/20)	147	-1	Բանգլադեշ	33 (9/24)
34	+2	Քաթար	65 (32/33)	91	+1	Ֆիջի	44 (30/15)	148	-5	Էվաթինի	33 (28/5)
35	+2	Բուլղարիա	64 (34/30)	92	+10	Էկվադոր	44 (20/25)	149	+5	Ուգանդա	33 (19/14)
36	+5	Հունաստան	63 (31/32)	93	+13	Գվինեա	44 (33/11)	150	-6	Ուզբեկստան	32 (21/11)
37	-2	Կիպրոս	63 (36/27)	94	+4	Հոնդուրաս	44 (28/16)	151	-11	Անգոլա	31 (16/15)
38	+2	Լիտվա	62 (39/23)	95	-1	Սենթ Լյուսիա	44 (33/10)	152	-5	Վենեսուելա	31 (14/16)
39	-5	Իսլանդիա	62 (31/31)	96	-3	Շրի Լանկա	43 (15/28)	153	-2	Տոգո	30 (19/11)
40	-1	Ճապոնիա	61 (19/42)	97	-14	Գրենադա	43 (33/10)	154	-1	Բենին	30 (11/19)
41	+5	Լիբանան	61 (35/26)	98	-3	Գանա	43 (21/22)	155	+4	Բուրկինա Ֆասո	30 (18/12)
42	-4	Նոր Զելանդիա	60 (25/35)	99	+5	Սուրինամ	43 (32/11)	156	-7	Կիրիբատի	29 (25/4)
43	+1	Լատվիա	60 (39/21)	100	0	Գաբոն	43 (26/17)	157	-7	Սան Տոմե և Պրինսիպի	29 (24/5)
44	-1	Սաուդ.Արաբիա	58 (25/35)	101	-4	Մոնտենեգրո	42 (30/12)	158	-1	Պապուա Նոր Գվ.	29 (16/12)
45	+4	Ռուսաստանի Դաշն.	58 (23/36)	102	-14	Սենթ Քիթս և Նևիս	42 (32/10)	159	-3	Նեպալ	29 (17/11)
46	-1	Չիլի	58 (27/31)	103	-7	Եգիպտոս	42 (14/28)	160	+2	Զիմբաբվե	28 (24/4)
47	-5	Սլովակիա	57 (36/22)	104	-14	Բահամներ	42 (32/10)	161	+2	Բենին	28 (18/10)
48	+4	Բրազիլիա	57 (18/39)	105	+4	Նիկարագուա	41 (30/11)	162	-2	Մալի	27 (22/5)
49	+8	Ռումինիա	57 (27/30)	106	-5	Ճամայկա	41 (28/13)	163	-5	Տանզանիա	27 (11/15)
50	-3	Բրունեյ	56 (40/17)	107	+1	Բոսնիա և Հերցեգովինա	41 (28/14)	164	+3	Սուդան	26 (19/6)
51	-1	Մավրիկիոս	56 (32/24)	108	-1	Դոմինիկա	41 (34/6)	165	-1	Ռուանդա	25 (14/11)
52	+4	Սերբիա	56 (31/25)	109	+2	Դոմինիկյան Հանր.	41 (22/19)	166	-1	Կոնգոյի ԺՀ	24 (16/8)
53	-5	Բահրեյն	56 (37/19)	110	-7	Սենթ Վինսենթ և Գրենադիններ	40 (31/9)	167	+1	Նիգեր	24 (16/8)
54	+1	Հար. Աֆրիկա	55 (22/33)	111	+1	Ինդոնեզիա	40 (14/26)	168	+3	Եմեն	23 (17/6)
55	-4	Թուրքիա	55 (21/34)	112	+5	Կոնգո	39 (27/12)	169	-3	Մալավի	22 (11/11)
56	-3	Ֆիլիպիններ	54 (19/35)	113	+8	Էլ Սալվադոր	39 (26/13)	170	-1	Բուրունդի	22 (15/7)
57	+7	Քուվեյթ	54 (30/24)	114	+18	Գվատեմալա	38 (20/19)	171	-1	Գվինեա Բիսաու	21 (17/3)

Եվրոպա
Հարավային և Կենտրոնական Ասիա
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա
Ենթասահարային Աֆրիկա
Հյուսիսային Ամերիկա
Հարավային և Կենտրոնական Ամերիկա և Կարիբյան ավազան

վորում է Նիդերլանդները, հաջորդիվ Սինգապուրն է: Թեև Սինգապուրը երկրորդն է գլոբալ փոխկապվածության համաթվի համընդհանուր գնահատականով, սակայն առաջինն է ներքին ակտիվության համեմատ միջազգային հոսքերի գերազանցմամբ: Միաժամանակ, առևտրի, կապիտալի, տեխնոլոգիաների և մարդկանց միջազգային հոսքերի բաշխվածության լայնությամբ առաջատարը Միացյալ Թագավորությունն է:

Թեև աշխարհին ամենաշատ կապված 55 երկրի շարքում են երկրներ բոլոր տարածաշրջաններից, սակայն առաջատարների ցանկում գերակշռում են Եվրոպայի և Արևելյան Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրները: Աշխարհին ամենակապակցված տարածաշրջանը Եվրոպան է, որտեղ տեղակայված է DHL-ի GCI համաթվի գնահատականով 10 առաջատար երկրներից 8-ը: Եվրոպան առաջատար է և՛ առևտրի, և՛ մարդկանց միջսահմանային փոխկապակցվածությամբ, մինչդեռ Հյուսիսային Ամերիկան առաջա-

տարն է կապիտալի և տեղեկատվության առումով:

2001-2021 թթ. վարկանշային սանդղակում առանձնանում է տասը երկիր՝ Ալբանիա, Վրաստան, Մոզամբիկ, Արաբական Միացյալ Էմիրություններ, Լատվիա, Լիտվա, Սիերա Լեոնե, Մալայզիա, Էստոնիա և Կատար, որ գլոբալ փոխկապվածության մակարդակով ամենանշանակալի թռիչքն է արձանագրել: Ցանկը գլխավորող Ալբանիայում և Վրաստանում աշխարհի այլ երկրների հետ կապվածությունը խորացել է՝ ի հաշիվ էական տնտեսական բարեփոխումների և տարածաշրջանային ինտեգրման: Լատվիան, Լիտվան և Էստոնիան միջպետական կապերը խորացրել են հատկապես 2004 թվականից սկսած՝ ԵՄ անդամակցությամբ: Մոզամբիկում և Սիերա Լեոնեում մասնակցությունը գլոբալ հոսքերին զգալի աճ է արձանագրել քաղաքացիական պատերազմների ավարտից հետո:

Այն հանգամանքը, որ արտաքին աշխարհի հետ փոխկապվածության մակարդակն ավելի բարձր է հատկապես զարգացած երկրներում, թույլ է տալիս եզրակացնել, որ գլոբալացումը, այդուհանդերձ, հիմնականում «պարփակվում» է զարգացած երկրների շրջանակում, մինչդեռ աշխարհի երկրների զգալի մասի համար իրավիճակն այլ է:

DHL-ի GCI համաթվի վարկանշային սանդղակում Հայաստանը 2022 թվականին 79-րդն էր 171 երկրի շարքում՝ 2020 թ. անկումից հետո մեկ հորիզոնականով բարելավելով դիրքը 2019 թվականի համեմատ: Ընդ որում, եթե երկրի միջազգային հոսքերի խորությունը (միջազգային հոսքերի մասնաբաժինն ընդհանուր գործունեության մեջ) էապես բարելավվել է (2019 թ. համեմատ 2021 թ. Հայաստանի դիրքերն աշխարհի 171 երկրի ցանկում բարելավվել են +8 հորիզոնականով՝ 77-րդից թռիչք կատարելով 69-րդ հորիզոնական), ապա նույնը չենք կարող ասել միջազգային հոսքերի լայնության (երկրների միջև միջազգային հոսքերի բաշխվածության) մասին (-7 հորիզոնական 2019-2021 թթ. ընթացքում՝ 87-րդից ընկնելով մինչև 94-րդ հորիզոնական): Այլ կերպ ասած՝ ՀՀ տնտեսության համար արտաքին աշխարհի հետ հարաբերությունների նշանակությունը վերջին տարիներին մեծացել է, սակայն, միաժամանակ, նվազել է միջազգային հոսքերի՝ առանց այն էլ ցածր աշխարհագրական բաշխվածությունը:

Հայաստանի կապվածությունն արտաքին աշխարհին առավել պատկերավոր արտացոլված է քարտեզ 1-ում. նմանօրինակ քարտեզները ցույց են տալիս, թե,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Արտաքին աշխարհին Հայաստանի կապվածությունը բնութագրող քարտեզ[15]

[15] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Key Highlights, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html, p. 119.

սովորաբար, ինչպես են միջազգային հոսքերը նվազում ֆիզիկական հեռավորության, ինչպես նաև մշակութային, քաղաքական և այլ տեսակի տարբերությունների պատճառով: Քարտեզում գործընկեր երկրների իրական չափսերը փափոխված են՝ հաշվի առնելով դրանց մասնաբաժինը Հայաստանի առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային հոսքերում: Այսպես՝ գործընկեր երկրները համարակալված են՝ ըստ Հայաստանի արտաքին տնտեսական հոսքերում ունեցած նշանակության, մինչդեռ երկրների գույներն առանձնացված են ըստ կիզակետային երկրի՝ տվյալ երկրում Հայաստանի՝ այդ երկրների միջազգային հոսքերում ունեցած մասնաբաժնի: Դեղինի և մոխրագույնի տարբեր երանգները բնութագրում են Հայաստանի հետ արտաքին տնտեսական գործառնությունների մասնաբաժինն այդ երկրներում, որտեղ մուգ դեղին գույնով ընդգծված են հատկապես սերտ կապեր ունեցող երկրները, իսկ մոխրագույնով՝ ընդհակառակը:

Ինչպես և ենթադրվում էր, Հայաստանի արտաքին հոսքերի գերակշիռ մասը, իսկ ավելի որոշակի՝ 43%-ը, կապված է Ռուսաստանի հետ: Երկրորդ նշանակալի երկիրը, որին Հայաստանը փոխկապակցված է առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերով, ԱՄՆ-ն է՝ 6% մասնաբաժնով: Ամենազավեշտալին այն է, որ Հայաստանի հետ առնվազն երեք տասնամյակ որևէ դիվանագիտական և, առավել ևս, տնտեսական հարաբերություն չունեցող Ադրբեջանը, չգիտես ինչու, հայտնվել է Հայաստանին առավել փոխկապակցված երկրների եռյակում (5%): Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանի հետ արտաքին առևտրի շոշափելի ծավալ ապահովող Թուրքիան չի էլ ընդգրկվել Հայաստանի հետ փոխկապակցված երկրների լավագույն տասնյակում: Ակնհայտ է, որ երկրների միջև փոխադարձ առևտրի գոյությունը հավաստող որևէ պաշտոնական վիճակագրական աղբյուր չկա, հայկական անձնագրով Ադրբեջանի սահմանը նույնիսկ ակամայից հատողները «հավակնում» են համալրել հարևան երկրի բանտերը՝ «ահաբեկչի» կարգավիճակով, ադրբեջանական կապիտալը, եթե նույնիսկ ինչ-ինչ «հույժ կարևոր» նպատակներով կիրառվի Հայաստանում, ապա դա հնարավոր է միայն քողարկված և միջնորդավորված տարբերակով՝ օտարերկրյա հիմնադրամների անվան տակ, իսկ տեղեկատվության (էլեկտրոնային փոստ, հաղորդագրություններ, տեսազանգեր և այլն) փոխանակությունը չի կարող այնպիսի ծավալներ ունենալ, որը կհանգեցնի նման արդյունքի: Այսպիսի պայմաններում մնում է միայն ենթադրել, որ իրականում Ադրբեջանի փոխարեն նկատի է առնվում Արցախի տարածքը, քանի որ, որպես լոգիստիկ ընկերություն, DHL-ն առաջնորդվում է փաստացի առաքման կամ տեղաշարժի հասցեներով՝ առանց չճանաչված երկրների կամ վիճելի տարածքների առանձնացման: Սակայն, այստեղ էլ պետք է արձանագրենք, որ ընկերությունը որոշակիորեն շտապել է... հատկապես, որ հաշվարկները հրապարակվել են 2022 թվականին՝ 2019-2021 թթ. տվյալների հիման վրա:

Հատկանշական է, որ արտաքին աշխարհին Հայաստանի կապվածությունը բնութագրող քարտեզում դեղինի մուգ ու բաց երանգներով են նշված Ադրբեջանը (ենթադրաբար՝ Արցախը), Վրաստանը, Ռուսաստանը, Իրանը և Ուկրաինան. սրանք այն երկրներն են, որոնց համար ՀՀ-ի հետ արտաքին հոսքերը համեմատաբար նշանակալի են: Մոխրագույնով ներկված երկրների համար Հայաստանի հետ առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերն աննշան են՝ տատանվելով ընդհանուրի նկատմամբ 0-0.2 %-ի միջակայքում:

Ինչևիցե, DHL-ի կողմից հաշվարկող գլոբալ փոխկապվածության համաթիվը, թեև զերծ չէ մեթոդաբանական թերություններից, այդուհանդերձ, բավականաչափ հետաքրքրական հիմք է ստեղծում արտաքին հարաբերություններում երկրների ներգրավվածության և լոգիստիկ խնդիրների լուծման հնարավորությունների շուրջ ուսումնասիրությունների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Иноземцев, В. Л. (2008). Современная глобализация и ее восприятие в мире. Век глобализации, (1), с. 31-44.
2. Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Complete Report, https://www.dhl.com/content/dam/dhl/global/delivered/documents/pdf/dhl-global-connectedness-index-2022-complete-report.pdf, 300 p.
3. Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Index 2022: An in-depth report on the state of globalization, DHL, Key Highlights, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html, 13 p.
4. DHL, Global Connectedness Index shows strength of globalization and benefits of improving it, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html
5. OECD (2009), OECD Benchmark Definition of Foreign Direct Investment 2008: Fourth Edition, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/9789264045743-en.
6. UNCTAD, World Investment Report 2017: Investment and the Digital Economy, United Nations, New York and Geneva, pp. 2-4, https://unctad.org/system/files/official-document/wir2017_en.pdf
7. UNCTAD, World Investment Report 2018: Investment and Industrial Policies, United Nations, New York and Geneva, p. 2, https://unctad.org/system/files/official-document/wir2018_en.pdf
8. UNCTAD, World Investment Report 2019: Special Economic Zones, United Nations, New York and Geneva, p. 2, https://unctad.org/system/files/official-document/wir2019_en.pdf
9. UNCTAD, World Investment Report 2021: Investing in Sustainable Recovery, United Nations, New York and Geneva, p. 2, https://unctad.org/system/files/official-document/wir2021_en.pdf
10. https://www.dhl.com

Анна ПАХЛЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ.
кандидат экономических наук, доцент

АРМЕНИЯ И МИР

УРОВЕНЬ ВЗАИМОСВЯЗАННОСТИ МИРА ПО ОЦЕНКАМ DHL

Непрерывный обмен и перемещение товаров, капитала, людей и информации между странами уже давно стали нормальным ритмом жизни. Страны постоянно прилагают серьезные усилия для упрощения, ускорения и обеспечения бесперебойности международных потоков, или, другими словами, для повышения эффективности логистических процессов, поскольку от этого зависят возможности стран получить выгоду от глобальных процессов. На использование таких возможностей направлен индекс глобальный связанности, разработанный крупной международной логистической компанией DHL, на основе которого уже более десяти лет (с 2001 года) составляется рейтинговая таблица стран мира. Индекс является уникальным инструментом оценки не только вовлеченности стран в процессы глобализации, но и их логистических возможностей.

Ключевые слова: *глобализация, глобальная связанность, международные потоки, торговля, капитал, информация, люди, логистика*

Anna PAKHLYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

ARMENIA AND THE WORLD

GLOBAL CONNECTEDNESS LEVEL ACCORDING TO DHL

The continuous exchange and flow of goods, capital, people and information between countries have become an integral part of people's lives. Nations are constantly making serious efforts to simplify, speed up and ensure the smoothness of international flows, or in other words, to increase the efficiency of logistics processes, since this determines the ability of countries to benefit from global processes. The global connectedness index developed by DHL, a large international logistics company, is aimed at exploiting such opportunities, on the basis of which the rating table of the world's countries has been compiled for more than a dozen years (since 2001). The index is a unique tool for assessing not only countries' participation in globalization processes, but also their logistics capabilities.

Keywords: *globalization, global connectedness, international flows, trade, capital, information, people, logistics*